



1843-1895

ՀԱՏՈՐ ԵՊ

ՓԵՏՐՈՒԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԻ ՊԱՐՍԿԵՐԷՆ ԲԱՌԵՐ Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՂԻՇԷՒ

(Տես յ'էջ 5)

3.

Եղիշայ երկու խօսքն զորս շանացիք ի վերոյ լուսարանել և անոնց առաջին ձևին վերադարձնել, եւրոպացի բանասիրաց ու շաղրութենէն սպրդած են. ասոր հակառակ յետագայ տունը Հոչակաւոր եղած է Երանազիտաց մէջ և շատերուն ջննութեանց ալ նիւթ հայթհայթած:

« Մոգպետն (որում յանձն արարեալ էին » Ղևոնդեանք) իշխան գենպետ էր Ապար » աշխարհին... քան զբողոքս գիտունն ևս » տեղեակ էր զբողոքսական օրինացն: Նա » և զոր մեծ պարծանս համարէին ըստ իւ » բանց մարտութեան կարգի, Համակցեն ա » նուն էր. գիտէր և զԱմպարտաշայն, ուսեալ » էր և զԲողոքայիտն. ունէր և զՊահլապիկն և » զՊարսկապետն. քանզի այս հինգ կեղծք են » որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մո » ղութեանն: Բայց արտաքոյ սոցա է միւս

» ևս այլ վեցերորդ, զոր Մոգպետն կոչեն » (Եղիշէ էջ 253):

Մազդեզանց մեր ձեռքն հասած կանոնա կան մատենաք» երեք տեսակ են. Ա. Աւեստա (Avesta), զրեալ զուտ երանեան բարբառով. Աւեստան մէկ ժամանակի գործ չէ. հնագոյն մասը՝ Գալիա (Gatha) նոյն ինքն ջրադաշտայ կը վերագրին. Ճնացածն ալ շարագրուած և աւարտած կ'երևի նախ քան զարշաւանա Մեծին Աղեքսանդրի յԱսիա: Աւեստայի լեզուն յոյժ նման է Աքեմենեան բռնապետի լեզուին, բայց անոր ոչ ծնօղն է և ոչ ալ զաւակը. այլ որիչ եղբայր լեզու, զոր ամանք նախկին Բակտրիոյ, այլք Մարաստանի կը կարծեն. մինչդեռ բռնապետի լեզուն բուն Պարսկ նահանգին բարբառն էր: Այսպիսի յայտնի է, թէ քանի որ Աքեմենեան հարաւ տուրիանը կանգուն կայր, մազդեզանց կանոնական գիրքն Աւեստան էր, որ բազմա հատոր մատենագրութիւն մի կը կազմէր. բայց անոր 21 գրքէն մէկը միայն վիճակ

դուր՝ ամբողջապէս մեր ձեռքն հասած է, և միացած գրող այն մասերը միայն՝ որք մազ-դեղանց ազոթսիրութեան և պաշտամանց անհրաժեշտ պէտք էին:

Գ. Զանդ Յօռմ, այս է Ծանօթութիւն, մեկնութիւն:

Սակայն արեւմտեան Սօխոյ ամէնէն ծաւալեալ լեզուն՝ Նիւնէի և Բարբլատտոնի ասորերէնն էր: Աքեմենեանց երկգարեալ տիրապետութեան միջոցին (550—336) քաղ-դէս-ասորերէնն խառնուեցաւ պարսկերէնին հետ, ինչպէս, որինակ իմն, Թուրքաւայոց լեզուն ընդ Թուրքերէնի, կամ Թուրքերէնն ինքնին ընդ պարսկերէնի և ընդ արաբերէնի: Աքեմենեանց անկմամբը, անոնց զուտ պարսկերէնն ալ քաղաւեցաւ տաանձնացաւ Պարսք նահանգին մէջ. և Սեւեակիացուց և յետ նոցա Պարթեաց պետութեան տիրող լեզուն՝ Աքեմենեանց ժամանակ ձեացած՝ այդ պարսկերէնով խառն սեմական բարբառն եղաւ, որ Պարթեաց արքունական լեզուն ալ ըլլաւուն համար՝ պահլաւի քահլաւի կամ պարթեարէն կոչեցաւ:

Բայց այդ կէտ ասորերէն կէտ պարսկերէն լեզուն խօսող և գործածողներուն համար՝ Աւեստան հասկանալի չէր կրնար ըլլալ: Ուստի Պարթեաց ժամանակ՝ Աւեստայէն ինչ որ մնացեր էր կամ ինչ որ կարեւոր գաղտուք էր, պահլաւերէնի Թարգմանուեցաւ, մեկնողական ընդլայնմամբը, երբեմն ալ համառօտութեամբը: Այդ պահլաւի վերծանութիւնքդ կը կոչին Զանդ, « մեկնութիւն »: պարթեարէն՝ Յօռմ, որ ելած է քան արեւմտե՝ « Զանալի, գիտեալ »: ինչպէս որ անոր լծորդը՝ « Ժանօթութիւն » կազմեալ է Ժանայ, Ժանի, Ժանեալ արմատէ:

Քէպէտ և համարեն մազդեղունք զպաշտամուն և զազօթս Աւեստայի բնագրով կը կատարէին, դիտելի է սակայն՝ որ Թէ Պարթեաց և Թէ Սասանեան առաջին ինքնակալաց օրերը՝ զուտ պարսկերէն բարբառող Պարսիք ևս՝ այդ խառն լեզուաւ գրուած վերծանութիւնքը կը գործածէին, երբ ազօթից և Աւեստայի վարդապետութեանց իմաստը գիտնալ ուզենային. վասն զի այն ժամանակի պարսկերէնը դարուց հոլովմամբ՝ Աւեստայի լեզունէն հետզհետէ հեռացած

ըլլալով՝ զայն հասկնալու նպաստամատոյց չէր. և պահլաւերէն Աւեստան աւելի զիւր իմանալի էր նոցա քան բնագիրն. միայն Թէ պահլաւերէն ձեռագիրները կարգաւոր և գրելու համար՝ դարմանալի ոճ մի ունէին, որ հազվադէպ կը կոչուի. պահլաւիկ գրութեանց մէջ որչափ ասորերէն բառ որ կար, անոնց պարսկերէն համանիլը կ'արտասանէին. օրինակ իմն, երբ պարսկերէն գօշյ « մի » գրել պէտք ըլլար, ասորերէն քիսրու կը գրէին, բայց գօշյ կ'ընթեռնուին. մայքոն մայքա կը գրէին և շահահտհ կը կարդային. Պօմպայի Փարսիներն ալ նոյնպէս կ'ընեն մինչև ցայսօր: Պահլաւիկ գրութեանց մէջ սեմական մասը աւելի շատ է քան պարսկականը. բայց որովհետեւ յաճախ գործածուած մասնիկներն և սովորական անունները սեմական են, ասոնց թիւը հազարը չանցնիր: Այս բառերուն ուսումը և ասոնց վրայէն պարսկերէն կարգաւոր դիւրացնելու համար՝ Սասանեանց օրէն ի վեր յատուկ բառագիրք մը կայ պահլաւերէնէ ի պարսկերէն, զոր այժմ իսկ Փարսիները բերնուց կը սերտեն, պահլաւիկ մատենից ընթերցման չսկսած:

Գ. Պազանդ Pazarand, որ է՝ Կրկին ծանօթութիւն:

Հինդ հարիւր յիսուն տարւոյ չափ պարսիկ տարրը նուաճեալ մնալէ յետոյ, Սասանեանն Սրտալիի ձեռքը վերականգնեցաւ (226ին) և Ազգին հետ լեզուն ալ զօրացաւ և զպահլաւերէնը տակաւ տակաւ վանեց ու մուսացութեան դատապարտեց. պահլաւիկ մատենանք սկսան գծուարձակալի ըլլալ. և երբ Հին Զանդին նոր Զանդ կամ մեկնութիւն գրել պէտք եղաւ, զուտ պարսկերէն գրուեցաւ: Այդ նոր մեկնութեանց ըսուած է Պազանդ, կրճատեալ ձև պոիտի—զանդ Pāzand բարբառութեան, որ Թարգմանի՝ « վերստին կամ կրկին ծանօթութիւն »:

Պազանդի լեզուն է Եդիլեայ ժամանակի պարսկերէնը, որ Հինգերորդ դարու հայերէնի շատ աւելի նման է քան Դարեհեան և այժմեան պարսկերէնը:

Հիմա դառնանք մեր նիւթոյն, և յառաջ քան զամէնայն ճշգնեք և սահմանեք գիւմաստ կիշտ բառին՝ որ կը բովանդակէ միւս լուծելի խնդիրները:

Հայերէնը պարսկերէնէ առած է *Դին*, քէշ, կեշտ, որը փաղանուն համարեալ են, առանց սակայն բացարձակապէս մի և նոյն նշանակութիւնն ունենալու:

Դին, *den*, է կրօնք, հաւատք, օրէնք, պաշտամունք, որ ըստ Պարսից մի միայն մազդեզն ուղիղ հաւատոց կը պատշաճի. «*Դինէմազդեզն*»: Աւեստայի լեզուաւ *daēna* *mazdayasni*.

Քէշ, պարսկ. քէշ կամ քաշ. *ս* և է կրօնք, հաւատք, աղանդ. Աւեստայի լեզուաւ՝ *dāshā*. *Pavāryō-dāshā*, որ Թարգմանի առաջին քէշ, և է նախնի կրօնն Պարսից, յառաջէ քան զքարոզութիւն Զրադաշտայ. քանզի Պարսկէ ևս իրենց նախահաւուց ոմանց ուղղափառ հաւատք մը կ'ընծայեն, որպէս Հրեայք ալ Մովսիսէն առաջ՝ Արարհամու և Յակոբայ: Իսկ Եղիշէ՛ որ զաղանդս կ'ուզէր եղծանել՝ խորագիր կը դնէ՝ «*Քէշն Պարսից*», որ աւելի յարմար է քան «*Դինն Պարսից*»:

Կեշտ. սորա պարսկական ձեւը չկայ սպժմ. Սասանեանց ժամանակի մատենից մէջ *cheshlak*, չէշտակ, որ նշանակէ վարդապետութիւն, *doctriṇe*. (Տես Շայաստ — լա շայաստ գլ. Բ). Աւեստայի մէջ Զրատա կամ Զրատի: Բայց ինչպէս որ արարեալէն *Դէշէք* Թէ զատ զատ կրօնքի և Թէ մի և նոյն կրօնի զանազան վարդապետութեանց կը զրուցուի, այսպէս ալ Եղիշէ կեշտք ըսելով կ'իմանայ առտանօր «*վարդապետութիւնք*», Թէպէտ այլուր իբրև կրօնք, քէշ գործածած է. «*Մոզն*» և զանգիկն (Մոնիքեցիք) և Հրեայն և քրիստոնեայն, և որ այլ բազում կեշտք են ի կողմէն: Ամեն կողմանս Պարսից աշխարհին է:

«*Պիտր* և *զվմպարտքաշ*». Հայկազեան բառարանը երկու ընթերցուածս ունի. առժպարտքաշ և Պարտքաշ: Այդ տարբերութեան ուսկից յառաջ եկած ըլլալը կը գտնենք Կոստանդնուպոլսոյ 1823 տպագրոյն ծանօթութեանց մէջ որոյ հրատարակիչը կ'ըսէ՝ Թէ Հին բառարանը ամպարտքաշ կը դնէ. բայց որովհետև իւր հետեւած օրինակին մէջ (ՈԺՁ Թուականը կրող Հին ձեռագիր մի էր) գտնեալն պարտքաշ գրուած էր, ինքն ալ այս վերջի ընթերցուածը անփոփոխ պահեց: Աղիղն ալ այդ է, որպէս պիտի տեսնենք ստորև: Առտի պարտ է դնել «*գամենայն Պարտքաշ*»:

Արդ՝ ինչպէս որ վերը ըսինք, Պարտքաշ *Pavāryō-dāshā* կը կոչեն մազդեզական մատենաց զհին կրօնն Երանայ, այն որ յայտնուէր էր Ճէմիտայ և անոր յաջորդացը, յորժամ տակաւին մեծ օրէնսդիրն Զրադաշտ չէր նորոգեր և փոփոխեր զայն: Բայց աւելի յսճախ այդ անունը կու տան նոյն իսկ Զրադաշտայ վարդապետութեան՝ որ աւանդեալ կայ ի գիրս, զանազանելու համար զսա յետագայ դարուց մէջ ասոր պակասաւոր և աղաւղեալ ձեւերէն: «*Գիտէր և զամենայն Պարտքաշ*», ըսել է ուրեմն՝ գիտէր զբովանդակ բնագիրն Աւեստայ: «*Pavāryō-dāshā* ժողովրդեան բերանը կրճատուելով՝ այժմ ասի *Poryōdashā*»:

«*Ուեալ էր զԳոգպայիտն*». այլ ընթերցուած Բազպայիտ: Ասոր համար չունինք մեկնութիւն մը զոր ստուգութեամբ կարենանք երաշխաւորել: Կարելի է Թէ Բազպայիտ Դ *Huz-pāzēm* ըլլայ՝ Աւեստայի ժէ գիրքը, որ մուգական ուսմանց, ծիսից և արարողութեանց վրայ կը խօսի, և որուն մէկ մասը մնացած է Նիրանգիստան անունով. մեզպարը գիտցած կ'ըլլայ ոչ միայն զՈրէնով՝ զՊարտքաշ, որ ամփոփեալ կան գլխաւորապէս վէնտիւզադ անուն զրքին մէջ, այլ և զարարողութիւնս և զկարգս պաշտամանց և աղօթից:

Արդարեւ մեր հեղինակաց օտար լեզուէ յիշած բառերն՝ ձեռագրաց մէջ չատ անգամ աղաւաղեալ են յայժ. բայց «*բազպայիտ*» Աւեստայեան բառից կազմութեան և ձեւին այնքան համոձայն է՝ որ անոր նկատմամբ չենք համարձակիր վերապահ մը վերագրելու գրչագրաց: Էյ Աւեստա աւ. *Avā-zdā*, հայցել, պաղատել, երգմենքուցանել, հաշտ առնել աղօթիւր: Դ. *Upā-zdā*, աղապկել, կոչել, կարգալ, պաղատել: Այդ երկու ածանցքդ ալ կազմեալ են մէկ մէկ նախդրէ և *Zdā* բայէ՝ որ է կարգալ, գովել. *Upā* մասնիկդ արդի պարսկերէնի մէջ ծծի փոխուած է. այս բայիս սահմանական ներկայ եղակի երրորդ գէլը՝ *Upāzdayēiti*.

Արդարեւ *upāzayēiti* կամ *avāzayēiti* դոյաւ կան չիք ի բառարանին Երեսօթի, որ միայն Աւեստայի մէջ գտնուած բառերը դրած է: Բայց, *Clm* «*գովել*» բայն ալ ճիշդ վերին ներուն պէս *Արօ*, *արօ* և այլ մասնիկներ

կ'տունէ, և ասոր խոնարհումն ալ անոնց պէս է. արդ սորա գոյականը կայ՝ *Clevis* «գո-վեան» ։ Վլան որոյ պատմաւ մը չկայ որ *zbañti*, *avazbañti*, *xpazbañti* ձևերն ալ գործածուած չըլլան. մանաւանդ որ *zñ* վերջաւորութիւնը այնքան յաճախ է Աւեստայի մէջ որքան ի մեզ՝ ինչ. որով Նիշընայ *ðaz-pañti* կամ *ðozpañti* անունն ալ կը մեկնուի « աղօթք, կարգալն, երդմենցոցանքն (զգիտ) » ։ Արդ Պարսիկք՝ ծխից, արարու-ղութեան կարգաց և ձևոց, բառից և թուա-նշանաց, բարոմանց և այլ նիւթական առարկայից՝ գերբնական մեծամեծ զօրութիւններ կը վերագրէին։ Այդօրից ազդեցութիւնը ոչ այնչափ հայցողին յերմեռանդութենէն, կամ հայցելոյն զթութենէն կախումն ունէր, որքան աղերսին շարագրութենէն կամ այս կամ այն ներգրով գրուցուելէն, և կամ այսչափ կամ այնչափ անգամ կրկնուելէն։ Բառերու շարքը պէսպէս արարողութեանց հետ միանալով, նա մանաւանդ երբ սահմանալ ժամուն կամ տարեկան թուականին արտասանուէր, ոչ միայն զգիտ և զգեւ կը ռոխկէր, այլ և զախտո կը բուժէր և զստեղս կը ծառա-յեցնէր, զհանդերձեալսն խօսել տալով նոցա։ Սոյնօրինակ վարդապետութիւնք, որ առաւել բազմաթիւ և բազմազգիմ էին քան մազ-կերէն դէնի գրական պատուիրանքն, և օրոց զորդին մէջ իմանալու է ինչ որ մոգութիւն կամ մոգական կախարդանք կ'անուանմը, ժողովրդեան միաքը սաստիկ գրաւած էին. և որովհետեւ անոնց միջոցաւ ամենայն ինչ յուսալի էր ձեռք բերել, տարակոյս չկայ որ գոնեա այնքան հետևողս և ուսուցիչս ունէին որքան Զրադաշտի բնազանցական և բա-բոյական քարոզութիւնը, կամ ասոր պահ-լաւիկ մեկնութիւնն և պարսկազնն կոչուած առասպելական ձևն։ Դիմքարդի մէջ զրու-նուած ծայրաքաղ համառօտութեան նայելով՝ այդ ամէնը բովանդակեալ էին Ուսպարամ։ Ուստի կարծեմ թէ Բազպայիտ այդ վար-դապետութեանց ամբողջութիւնը կը նշանակէ։

« Ունէր և զՊանդայիկն՝ այս է, գիտէր զպահ-լաւիկ լեզուն և այդ լեզուաւ գրուած վեր-ժանութիւնն և վարդապետութիւնքը (*Zand*)։ Ի հինգերորդ դարուն՝ սոցա պահլաւիկ կամ պարթեական կոչուիլն ի Պարսից՝ հաստա-

տութիւն կու տայ այն պատմական վկայու-թեանց՝ ըստ որում Պարթեիք անտարբեր և արհամարհողք չեղան ամէն ժամանակ զբա-զայտական օրինաց, ինչպէս կը կարծուի ընդհանրապէս։

Բայց Սասանեանց ժամանակակից հայ, յայն և արարացի մատենագրաց մէջ՝ կը գըւ-նենք շատ մը վարդապետութիւններ որք չկան յԱւեստա, և ոչ իսկ Զանդ և Պա-զանդ գրոց մէջ. օրինակ իմն՝ Զրուանայ նա-խագոյութիւնը. Արեգական և լուսնոյ առաւ-պելախառն ծագումը. Որմոգայ սպանումը, և այլն, որք Աւեստայի սկզբանց ալ համա-ձայն չէին և ի վերջոյ մտած բաներ էին, բայց և այնպէս Պարսից աշխարհին արեւ-մրտեան և հարաւային նահանգաց մէջ դաւա-նութեանց կարգն էին։ Նշիշէի պարսկադիւն կոչածն՝ այդ դաւանութեանց բովանդակու-թիւնն էր, որոց մեծագոյն մասը գրի վրայ առնուած չէր, ինչպէս կը գրուէ մեզ Եղնիկ։

Այդ չորս կեղտն ալ ուղղափառ համա-րեալ էին, և ըստ Նիշընայ՝ սոցա միոյն միայն հետեւիլն ալ օրինաւոր էր։ Բայց չորսն ալ գիտցողն և ընդունողը յոյժ ի պատուի էր և համակցեն⁽¹⁾ կ'ըսուէր, որ է Ահամայնադենո կամ որպէս կը մեկնէ Թովմա Սրժորունի⁽²⁾ « ամենագէտ ի հաւատս կրակի » ։ Ասանկով չորս կեղտէ հինգ վարդապետութիւն ձևա-ցած կ'ըլլայ։

Այդ հինգ վարդապետութեանց մէջ բո-վանդակեալ էր ի հինգերորդ դարու՝ պարս-կական Դենն. Եւ թէպէտ վեցերորդ մ'ալ կար Մոգպախ⁽³⁾ (այլ ընթերցուած Պետմոգ կո-չեցեալ), բայց որովհետեւ սա միւս հինգն դուրս էր, հերձուած մը եղած ըլլալու էր, իսկ անուանդ ուսկից յառաջ գալը և կամ աղանդիդ ինչ ըլլալը, մեր ժանթութեանց չափին մէջ կարելի չեղաւ ստուգել։

1. Արդ պարսկերէն հօտ՝ *hē* առեւը կը գրուէ ու կը կարգացուէր *Hamak*, որպէս հայերէն հօտակ։

2. « Զայս և եւ իսկ տեղեկացեալ դիտացի ի բազմաց յայեալեւ որ Խաբարիքն հոյիւն, որոց դէպ եղև ինձ Գան-դեպել եկելոց օմանց ի յԱղգաստան աշխարհէ, ոք ա-նուանէին զինքեանս համակցեալ, սցսինքն ամենադէտ ի հաւատս կրակի »։ էջ 28։